Հաստատում եմ՝

Երևանի Մ.Մանուշյանի անվ. հ.48 հիմն. դպրոց

տնօրեն_____ Ժ.Արիստակեսյան

Կ.տ. 31.08. 2022

Ֆիզկուլտուրա, շախմատ և ն.զ.պ. առարկաների մեթոդ միավորման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023 ուս.տարի

Քննարկվել է 28.08.2022թ. մ/մ նիստում

Մեթոդ միավորման նախագահ՝ Ա.Բաղդասարյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտում կատարվում են լուրջ բարեփոխումներ, որոնց նպատակն է կրթության որակի բարելավումն ու ժամանակակից պահանջներին համապատասխան գործունեության ապահովումը: Հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումների ընթացքում առանցքային դեր է վերագրվում աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանն ու արժեվորմանը:

Այս համատեքստում իր ուրույն տեղն ունի ֆիզիկական կուլտուրա և նախնական զին պատրաստություն առարկաները: Կարևորվում է այդ առարկաների ուսուցիչների աշխատանքը, որի նպատակն է ձևավորել այնպիսի քաղաքացի, որը լինի առողջ, ներդաշնակ զարգացած, բավարար ֆիզիկական պատրաստվածությամբ, հայրենիքին ծառայելու և պատրաստ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու,նախաձեռնելու և կազմակերպելու տարաբնույթ աշխատանքներ: Մեթոդ միավորման ուսուցիչի գլխավոր նպատակն է սովորողներին հասցնելու այն աստիճանի, որ կարողանան ի կատար ածելու վերը նշվածը:

Դրան է ծառայում նաև մեթոդ միավորման 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, որը կազմված է հաշվի առնելով դպրոցի նյութատեխնիկական բազան և առկա գույքը:

Կից ներկայացվում է աշխատանքային պլանը:

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատվությունը	Նշումներ կատարման մասին
1.	**Կազմակերպչական**			
ա)	Մեթոդ միավորման ուսուցիչներին տեղեկացնել դասարանների և դասաժամերի հատկացման մասին	օգոստոս	նախագահ	
բ)	Տեղեկացնել ծրագրերի մասին, հնարավորինս ապահովել գրքերով և մասնագիտական գրականությամբ	օգոստոս	նախագահ, դպրոցի գրադարան	
գ)	հաստատել պարապող ուսուցիչների կողմից կազմված ուս. տարվա աշխատանքային պլանները	օգոստոս	նախագահ	
դ)	Ավարտին հասցնել ՆԶՊ դասասենյակի և պահասենյակի նորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքները	օգոստոս, սեպտեմբեր	ՆԶՊ-ի ուսուցիչ, տնօրինություն	
ե)	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը մասնագիտական խորհրդակցություններին	սեպտեմբեր	Նախագահ	
զ)	Ֆիզկուլտուրայի անհրաժեշտ գույքի հայթհայթում, տղաների հանդերձարանի մասնակի նորոգում	օգոստոս, տարվա ընթացքում	ուսուցիչներ, տնօրինություն	
2.	**Ուսուցիչների գիտելիքների, հմտությունների կարողությունների զարգացում**			
ա)	Անհատական աշխատանքային պլանների կազման և թեմատիկ պլան գրաֆիկների աշխատանքների կազմակերպում և ավարտում: Պլանների հաստատում	օգոստոս, սեպտեմբեր I տասնօրյակ	նախագահ	
բ)	Ակտիվ մասնակցության ապահովում մասնագիտական որակավորման դասընթացներին	տարվա ընթացքում	նախագահ, տնօրինություն	
գ)	Բաց դասերի կազմակերպում և պատշաճ անցկացում	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
դ)	Դասալսումների անցկացում և դասերի քննարկում	տարվա ընթացքում	նախագահ	

ե)	Կազմակերպել ընթերցումներ ծրագրային որևէ թեմայի ուսուցման մեթոդիկայի վերաբերյալ (ուսուցչի կարծիքը, մոտեցումը, դասանցկացման մեթոդները և այլն)	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
զ)	Ֆիզկուլտուրայի, ՆԶՊ, շախմատ առարկաների տասնօրյակ		նախագահ, ուսուցիչներ	
3.	**Արտադասրանական և արտադպրոցական աշխատանքներ**			
ա)	Դպրոցում կազմակերպել և անցկացնել ներդասարանական խաղեր տարբեր մարզախաղերից	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
բ)	Դպրոցի հավաքական թիմերի մասնակցություն համայնքի և քաղաքի առաջնություններին	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
գ)	Ապահովել աշակերտների մասնակցությունը ռազմ-հայրենասիրական միջոցառումներին	տարվա ընթացքում	ՆԶՊ-ի ուսուցի	
դ)	Կազմակերպել IX դասարանների այցելությ ուն հրաձգարան՝ կրակային ունակությունները զարգացնելու և կատարելագործելու համար	տարվա ընթացքում	նախագահ, ՆԶՊ-ի ուսուցիչ	
է)	Կամզակերպել հանդիպում ՀՀ լավագույն սպորտսմեններից որևէ մեկի հետ	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
զ)	Բանակի օրվա կապակցությամբ դպրոց հրավիրել զինվորականների կամ այցելել մերձակայքում տեղակայված զորամաս	տարվա ընթացքում	նախագահ, ուսուցիչներ	
է)	Աշակերտների ծնողների կողմից դիմելու և առաջարկելու դեպքում դպրոցում կազմակերպել սպորտային խմբակներ (վճարումը և վճարման ձևը համաձայնեցնել տնօրինության և ծնողների հետ)	տարվա ընթացքում	դպրոցի տնօրինություն, ուսուցիչներ	

4.	Աշխատանք ծնողների հետ			
ա)	Ծնողներին մասնակից դարձնել ֆիզկուլտուրայի դասերին՝ առարկայի նկատմամբ կարծիք ձևավորելու համար			
բ)	Հնարավորության առկայության դեպքում երկու դասարանների ծնողների միջև անցկացնել որևէ մարզախաղի ցուցադրական առաջնություն	տարվա ընթացքում		
գ)	Դասղեկների միջոցով աշակերտների ծնողներին ներկայացնել հիմնական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի արժեքային համակարգը և սովորողներին ներկայացվող պահանջները	սեպտեմբեր	նախագահ, ուսուցիչներ	
դ)	Աշխատանքներ տանել ծնողների հետ, որպեսզի նրանք իրենց երեխաներին անհարկի չազատեն ֆիզկուլտուրայի դասաժամերից	տարվա ընթացքում	ուսուցիչներ, դասղեկներ	

Ֆիզկուլտուրա, շախմատ, ՆԶՊ
առարկաների մեթոդ միավորում

Ա.Բաղդասարյան